ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> հոկտեմբերի 2015 թվականի N: 217-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ, ԱՄԱՍԻԱՅԻ, ԱՇՈՑՔԻ, ԱՐԹԻԿԻ ԵՎ ՄԱՐԱԼԻԿԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1792-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կանոնադրության>> 30-րդ կետի դրույթներով, և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի օգոստոսի 3-ի N 115-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Ախուրյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Ամասիայի սոցիալական աջակցության տարածքային գործակալության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի:

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Աշոցքի սոցիալական աջակցության տարածքային գործակալության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 3-ի:

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Արթիկի սոցիալական աջակցության տարածքային գործակալության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 4-ի:

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Մարալիկի սոցիալական աջակցության տարածքային գործակալության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 5-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2006 թվականի հունիսի 28-ի <<ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների կանոնադրությունները հաստատելու մասին>> N 216 որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝